

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ
ՀԱԿՈԲ ԵՎ ԻԳԱ ԳՈՒՅՈՒՄՃՅԱՆՆԵՐԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԽԱԿՍ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾԻՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՅԱԿՈԲ ԵՒ ԻԳԱ ԳՈՒՅՈՒՄՃՅԱՆՆԵՐ
ՈՐ Ի ՆԻՒ ԵՕՐՔ, ԱՄՆ**

Սիրելի Տեր եւ Տիկին Գոյումճեաններ,

Հայրապետիս համար անկեղծ գոհունակութիւն է գնահատանքի խօսք ուղղել Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակներիդ եւ ջերմ ողջոյնով բերել Ձեզ Հայրական Մեր սէրն ու օրհնութիւնը:

Տասնեակ տարիներ միմեանց զօրակից, Դուք կարեւոր ծառայութիւն էք բերում ազգային մեր կեանքից ներս՝ մեր Սուրբ Եկեղեցին շէն ու պայծառ տեսնելու որդիական նախանձախնդրութեամբ իրականացնելով արժանաւոր բազմաթիւ գործեր ու նախաձեռնութիւններ: Ձեր գործունէութիւնը գնահատարժան է յատկապէս ի նպաստ ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի: Ձեր բերած ազնիւ ջանքերն ու սրտաբոլիս ընծայաբերումները արդիւնաւորապէս նպաստում են առաջնորդանիստ Սուրբ Վարդան Մայր Տաճարի պայծառութեանը եւ նրա հովանու ներքոյ հայորդեաց համախմբմանն ու ծուխի բարգաւաճմանը:

Հարազատ ժողովրդի, մեր Սուրբ Եկեղեցու եւ Հայրենի մեր Երկրի հանդէպ Ձեր հոգու անկեղծ սէրն ու նուիրումը Դուք արտայայտում էք նաեւ ի նպաստ Հայ Օգնութեան Ֆոնդի եւ Սուրբ Ներսէս ընծայարանի Ձեր ստանձնած յանձնառութիւններով եւ Ռումինիայի հայոց թեմում Սուչավայի Սուրբ Խաչ եկեղեցու նորոգութեանը բերած ազնիւ աջակցութեամբ:

Ուրախ ենք, որ ազգային եւ եկեղեցական մեր կեանքում Ձեր վաստակը Դուք հարստացրեցիք նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին մատուցած ծառայութիւններով՝ սիրայոժար կերպով յանձն առնելով նորակառույց Միաբանական շէնքի օդորակիչների հովանաւորութիւնը: Արդարեւ, տարիների Ձեր նուիրեալ գործունէութիւնը, որ Տիրոջ օրհնութեան ներքոյ արգասաւորուած է բարի արդիւնքներով, ներշնչող ու խանդավառող օրինակ է երիտասարդ հայորդեաց համար՝ իրենց կեանքի ընթացքը բարե-

զարդելու ազգասիրութեամբ, հայրենասիրութեամբ ու եկեղեցասիրութեամբ իմաստաւորուած գործերով:

Ձեր հաւատաւոր ու ազգասէր ոգու եւ ազգային-եկեղեցական մեր կեանքում գովարժան Ձեր վաստակի բարձր գնահատանքով եւ սիրով ընդառաջ ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանի ազնիւ խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Ի Ո Ր Ի Չ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Աղօթում ենք առ Ամենակալն Աստուած՝ հայցելով, որ միշտ շնորհառատ պահի Ձեր հաւատաւոր հոգին եւ պարգեւի երջանկութեամբ ու նորանոր ձեռքբերումներով լեցուն արեւշատ կեանքի տարիներ:

Թող Բարձրեալ Տէրն Իր Ամենախնամ Աջի հովանու ներքոյ պահպանի Ձեր հաւատաւոր ընտանիքը՝ երկնահեղ բիւր օրհնութեամբ:

Շնորհք, սէր եւ ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեւեան. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 31-ն Մայիսի
յամի Տեառն 2008 եւ ի թուին հայոց ՌՆԾԷ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 472